ԵՊՀ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ/ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ/ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ 2019/20 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՊՀ կրթական ստորաբաժանումներում (ֆակուլտետ/ինստիտուտ/կենտրոն) իրականացված մագիստրոսական կրթական ծրագրերի (ԿԾ) մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների և համապատասխան այլ փաստաթղթերի ստուգման արդյունքում առանձնացվել և ներկայացվում են դրանցում արձանագրված ընդհանրական մի շարք խնդիրներ, որոնց մասին բարձրաձայնել են մասնավորապես ուսանողները իրականացված ֆոկուսխմբային և այլ հարցումների ընթացքում: Այդ խնդիրներից ոչ բոլորն են արտացոլվել ստորաբաժանումների հաշվետվություններում:

Վերոնշյալի առնչությամբ ներկայացվում են հետևյալ նկատառումները:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Գրեթե բոլոր ԿԾ-ների վերաբերյալ ֆոկուսխմբային հարցումների ժամանակ ուսանողների կողմից առավել ընդգծված խնդիրներից մեկը վերաբերում է **մագիստրոսական թեզին**:
   - Մագիստրոսական թեզը շատ ուսանողներ համարում են գիտությամբ զբաղվելու նախնական էտապ և կնախընտրեին, որ իրենց աշխատանքները որևէ հարթակում տպագրվեին և համապատասխան գրախոսություն կամ արձագանք (feedback) ստանային: Ըստ ուսանողների՝ ընդհանրապես համալսարանում հետազոտական բաղադրիչը հզորացման կարիք ունի՝ կրթական բաղադրիչին զուգահեռ: Նրանց կարծիքով՝ դրան կարող է նպաստել հետազոտական կենտրոնների հիմնումը ֆակուլտետներում:
   - Մագիստրոսական թեզերի պատրաստման և պաշտպանության հետ կապված դժգոհությունների մի մասը վերաբերում է թեմաների ընտրությանը, երբ ամբիոնի կողմից առաջարկվում են արդեն բազմիցս գրված թեզերի թեմաներ, որի հետևանքով կորչում է հետազոտական աշխատանք իրականացնելու մոտիվացիան: Ըստ ներկայացված կարծիքների՝ ուսանողը պետք է նախապես ընտրի թեման, հակառակ դեպքում «ստիպված է վերցնել այն, ինչ մնացել է»: Շատ հաճախ թեզի ղեկավարները առանձնապես հետևողական չեն լինում կատարված աշխատանքը պատշաճ գնահատելուն. չկա հետադարձ կապ (feedback): Առկա է նաև թեզերի պատրաստման ժամկետների վերանայման և ուսանողներին հարմարեցնելու խնդիրը:
   - Որոշ ուսանողներ գտնում են, որ կրթական ծրագիրը սկսելուց ընդամենը մեկ ամիս անց ուսանողները ստիպված են ընտրել մագիստրոսական թեզի թեմա, ինչը խնդիրներ է առաջացնում իրենց համար, քանի որ իրենք դեռ

հստակ պատկերացում չունեն ծրագրի ու մասնագիտացման մասին ու դժվարանում են հետազոտության թեմա ընտրել: Ըստ ուսանողների՝ թեմաների ընտրությունն իրենց պարտադրվում է, այնինչ առաջին կիսամյակում նրանցից ոչ բոլորը կարող են պատկերացնել, թե ինչ ուղղվածությամբ են ցանկանում խորանալ մասնագիտության մեջ: Մագիստրոսական թեզերի կատարումը նրանք անարդյունավետ են համարում, չնայած նշում են նաև, որ դա փորձ է, որը նրանք պետք է ունենան:

- Որոշ ուսանողներ էլ հակառակ տեսակետն են արտահայտում. թեմաների ընտրության ժամանակ հաշվի է առնվել իրենց կարծիքը, ղեկավարը ընտրության հնարավորություն է տվել, կամ էլ միասին քննարկելով ընտրել են թեման:
- Ուսանողներից ոմանք մագիստրոսական թեզերի կատարման մասին նաև նշում են, որ նման աշխատանքը արդյունավետ են համարում միայն այն դեպքում, երբ ուսանողը պլանավորում է գիտությամբ զբաղվել, այնուամենայնիվ, գտնում են, որ՝ *«ավելի լավ է թեզ գրել, քան՝ հանձնել պետական քննություն»*: Վերը նշվածից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ ուսանողներից շատերը անձնապես հետաքրքված չեն իրենց մագիստրոսական թեզերի կատարմամբ, ինչպես նաև նշում են, որ եթե միևնույն է, պարտավորված են գրել մագիստրոսական թեզ, ապա կցանկանան մագիստրոսական թեզի թեմայի ընտրության հնարավորություն ունենալ, ոչ թե գրել այնպիսի թեմաներով, որոնք իրենց պարտադրվում են իրենց գիտական ղեկավարների կողմից:
- Գիտահետազոտական աշխատանքով հետաքրքրված մի ուսանողի խոսքով՝ ինքը խոչընդոտների է հանդիպում իր գիտական հոդվածները տպելիս, քանի որ պահանջում են համահեղինակ գտնել (ասպիրանտ կամ ավելի բարձր՝ գիտական աստիճանով), մինչդեռ ինքը հոդվածները գրում է ինքնուրույն, և համահեղինակության պահանջը համարում է արհեստական:

2. Ուսանողների կողմից մատնանշված խնդիրների մի խումբ վերաբերում է **կրթական ծրագրի/դասընթացների բովանդակությանը և իրականացման ձևին**:
   - Որոշ ԿԾ-ների վերաբերյալ ֆոկուսխմբային հարցումների արդյունքներում նշված է, որ ծրագրի տված գիտելիքներից ուսանողները դժգոհ են, քանի որ դրանցում կա՛մ ոչ մի նոր բան չկա, կա՛մ շատ ընդհանուր է:
   - Ուսանողների կողմից ընդգծվում է նաև դասավանդման նորարարական ինտերակտիվ մեթոդների անհրաժեշտությունը, քանի որ դասախոսություն-թելադրություն գրելը վաղուց սպառել է իրեն:
   - Ուսանողները նշում են, որ ունեն ավելի շատ կիրառական հմտություններ զարգացնող առարկաների, քան թե տեսական գիտելիքներ հավաքելու կարիք, ինչպես նաև գտնում են, որ որոշ առարկաների դեպքում սահմանված

ժամաքանակը չի բավականացնում այդ առարկաները լիարժեք և բազմակողմանի յուրացնելու համար:

- Ուսանողների մեծ մասի կարծիքով՝ իրենք ունեն պրակտիկ գիտելիքների կարիք, որի համար բակալավրիատում անցկացրած պրակտիկան (հիմնականում ուսումնական հաստատություններում) շատ հաճախ կրում է ձևական բնույթ և բոլորովին արդյունավետ չէ:
- Ուսանողներից շատերը նշում են բակալավրիատում և մագիստրատուրայում բազմաթիվ դասընթացների, դրանց թեմաների և բովանդակության կրկնության մասին: Տարբեր կրթական ծրագրեր հաճախ ունեն միևնույն առարկայացանկը մագիստրատուրայի առաջին կուրսում, և դասընթացը համատեղ են անցնում:
- Շատ ուսանողներ կարծում են, որ իրենց ծանրաբեռնում են անիմաստ առարկաներով, որոնք ուղակի դասաժամ են ապահովում դասախոսների համար, առկա են բազմաթիվ ընդհանրական առարկաներ, խառը դիսցիպլիններ, որոնք չեն տալիս նեղ մասնագիտացում տվյալ որակավորման համար:
- Ուսանողների մեկ այլ հատված էլ նշում է, որ ծրագրում չկան ավելորդ առարկաներ, բոլոր առարկաները կապված են և փոխլրացնող:
- Որպես թերություն՝ նշվում է նաև դասընթացների և ժամերի անհամաչափ բաշխվածությունը շաբաթվա կտրվածքով: Որոշ ԿԾ-ների դեպքում, օրինակ, շաբաթվա ընթացքում մեկ օր ունենում են ընդամենը մեկ ժամ, հաջորդ օրը՝ չորս ժամ, հետո նորից՝ մեկ ժամ. այս ցրված գրաֆիկը թույլ չի տալիս զբաղվել աշխատանքային գործունեությամբ, դժվար է մեկ ժամի համար հասնել համալսարան: Մյուս կողմից, ուսանողների կարծիքով, կան առարկաներ, որոնք ավելի անհրաժեշտ են, բայց անցնում են շաբաթական ընդամենը մեկ անգամ:
- Ուսանողները դժգոհություններ ունեն նաև ընդհանուր օտար լեզվի անբավարար իմացության մակարդակից, դասաժամերի պակասից, այդ խնդրին ոչ բավարար ուշադրություն դարձնելուց: Որոշ ուսանողների կարծիքով՝ քիչ են երկրորդ օտար լեզվին, ինչպես նաև ռուսերենին հատկացվող դասաժամերը:
- Օտար լեզուներ ուսումնասիրողներն էլ, իրենց հերթին, ունեն դժգոհություններ դասընթացներից այն առումով, որ իրենց ծանրաբեռնում են տեսական-քերականական բազմաթիվ առարկաներով, որոնց վերաբերյալ հարցաշարային քննություններն անցնում են ոչ արդյունավետ՝ շարադրությունների տեսքով, թեև կարող էին թեստերի միջոցով ամրապնդել տեսական նյութը: Ուսանողները նախընտրում են պրակտիկ, գործնական գիտելիքները, վերլուծական կարողությունները, գնահատումը էսսեների և այլ ինքնուրույն աշխատանքների միջոցով:

3. Լուրջ խնդիր է դիտարկվել նաև **բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ների բովանդակային հարաբերակցությունը**:
   - Մի շարք ուսանողներ ընդգծել են տվյալ մագիստրոսական ԿԾ-ում բակալավրական բազային կրթությամբ և հարակից կամ այլ մասնագիտություններից ներգրավված սովորողների միջև տարբերությունը որոշ դասընթացների ծրագրի յուրացման առումով. բազային կրթությամբ մագիստրոսներն ավելի պահանջնկոտ են, դասընթացները հիմնականում ծանոթ են նրանց և երբեմն ձանձրալի են, թեև կրթական ծրագրից նրանց ակնկալիքները, ինչպես իրենք են նշում, հիմնականում արդարացվում են, մինչդեռ նախնական այլ մասնագիտացում ունեցողների համար ծրագիրը բարդ է ու նաև հետաքրքիր, թեզ գրելը՝ հիմնականում անցանկալի, իսկ ակնկալիքները միշտ չէ, որ արադարացված են:
   - Անհրաժեշտ գիտելիքների կարևորման տեսանկյունից նույնպես արձանագրվել է հակասություն: Բակալավրի համապատասխան մասնագիտացումն ունեցող ուսանողների համար մագիստրոսական ծրագրում երբեմն շատ են կրկնությունները, և նոր գիտելիքի պակաս կա: Միևնույն ժամանակ, բակալավրի այլ մասնագիտացմամբ ուսանողների համար մատուցվող գիտելիքը բարդ է, և նրանք ունեն անհատական մոտեցման կարիք: Ուսանողներից մեկի կարծիքով՝ դասախոսների ուղերձները ուղղված են նույն մասնագիտացումն ավարտած ուսանողներին, օր.՝ նյութը նորից բացատրելու փոխարեն դասախոսը հղում է անում բակալավրիատում կատարված որևէ դրվագի, սակայն պարզ է, որ այն կարող են հիշել միայն նույն բակալավրիատի համապատասխան բաժնում սովորած ուսանողները, իսկ նորեկների համար հղումը մնում է անհասկանալի:
4. Ըստ ֆոկուսխմբային հարցումների (ՖԽՀ) արդյունքների՝ ուսանողները մտահոգված են նաև իրենց **գիտելիքների ստուգման և գնահատման** խնդրով: Մասնավորապես՝
   - Որպես կրթական ծրագրի թերություն, ուսանողները նշում են գրավոր քննությունները. դրանք ուսանողների կարծիքով ավելի շատ ստուգում են հիշողությունը, քան թե առարկայի խնդիրներին տիրապետելու ցուցանիշները:
   - Շատերը որպես գիտելիքի գնահատման եղանակ առաջարկում են հարցաշարերով քննությունները փոխարինել ինքնուրույն աշխատանքներով, էսսեներ գրելով, անհատական կամ խմբային հետազոտական աշխատանքով, որի արդյունքները ուսանողը ինքը կներկայացնի (presentation) և կգնահատվի: Սրանից բխում է այն, որ ուսանողը այսօրինակ աշխատանքներ իրականացնելու համար համապատասխան հմտությունների կարիք ունի. ինչպես գրել էսսե, անել հետազոտական աշխատանք և այլն:

5. Ուսանողները բարձրացրել են նաև **դասախոսներին վերաբերող** մի շարք խնդիրներ:
   - Դասախոսների մասին խոսելիս ուսանողները կարևորում են նրանց ոչ միայն մասնագիտական, այլև մանկավարժական և անձնային որակները, մասնավորապես՝ անկեղծությունը, հաղորդակցման հանդեպ բաց և ազատ վերաբերմունքը, ուսանողների հետ համագործակցային հարաբերություններ կառուցելու պատրաստակամությունը: Մինչդեռ, ըստ ուսանողների, որոշ դասախոսներ կոնֆլիկտային են, ոմանք կարող են լսարանում ծխել, ոմանց համար սովորական երևույթ է քննությունից ուշանալը և այլն:
   - Որոշ ուսանողների կարծիքով՝ դասախոսները պետք է տան արդի, ոչ հնացած գիտելիքներ, դրդեն ուսանողներին սովորելու, գիտելիքի գնահատումը կատարեն օբյեկտիվ չափանիշներով, նաև *«ուսանողին վերաբերվեն որպես ուսանող, ոչ թե որպես աշակերտ կամ մանկապարտեզի սան»*:
   - Մի շարք կրթական ծրագրերում դասավանդող դասախոսների մասին նշում են, որ մի մասը, տարիքից անկախ, փորձում է լսարանում ինքնահաստատվել, դասախոսությունները տալիս է թելադրությունների տեսքով:
   - Որոշ ուսանողներ կարծիք են հայտնում, որ «դասավանդող դասախոսների մի մասը սահմանափակ ու միայն գրքային գիտելիքներ ունի իր առարկայից, ու երբ մի փոքր շեղվող հարց ես տալիս, չեն կարողանում պատասխանել», «…մագիստրոսական ծրագրում անցնում են վեց առարկա, որոնցից չորսը նույն դասախոսն է կարդում»:
   - Քիչ չեն ցանկությունները ունենալ նոր, երիտասարդ դասախոսներ տարեցների փոխարեն:
   - Որոշ ուսանողներ էլ նշում են, որ կցանկանային, որ իրենց ծրագրում ավելի շատ հմուտ և գիտական աստիճաններ ունեցող դասախոսներ լինեն:
   - Նրանք նաև նշում են, որ ցածր աշխատավարձի պատճառով դասախոսը կորցնում է աշխատելու մոտիվացիան, ծանրաբեռնվում է այլ աշխատանքներով և շատ հաճախ տեղափոխվում այլ բուհ: Հիմնական առաջարկն այն է, որ դասախոսների աշխատավարձերը բարձրացվեն, որպեսզի դասախոսը աշխատավարձի խնդիր չունենա, պարզապես հաճույք ստանա դասապրոցեսից, ընդ որում սա, ըստ ուսանողների, կվերացնի նաև կոռուպցիան: Նրանց կարծիքով՝ դասախոսները նաև մշտական վերապատրաստման կարիք ունեն, այդ թվում՝ արտասահմանում:
6. Որոշ ուսանողների համար խնդրահարույց է **ուսումնառություն-աշխատանք համաժամանակյա գործունեության կազմակերպումը:**
   - Որպես կրթական ծրագրի թերություն, որոշ ուսանողներ նշում են աշխատող ուսանողների համար ուսումնական գրաֆիկի ճկուն չլինելը:

- Ըստ ուսանողների հայտնած կարծիքների՝ կարիք կա վերանայելու դասացուցակները՝ դասաժամերի բաշխումը հարմարեցնելով աշխատող ուսանողներին:
- Նշվում է նաև դասերը երկրորդ հերթով անցկացնելու հետ կապված անհարմարությունների մասին:
- Շատերը գտնում են, որ բուհի և աշխատաշուկայի միջև կապը բացակայում է, կամ առկա է թույլ համագործակցություն:

7. Գրեթե բոլոր ԿԾ-ների ֆոկուսխմբային հարցումների արդյունքներում նշված է **գրադարանի, տեխնոլոգիական ռեսուրսների սղության, համակարգչային լսարանների ոչ բարվոք վիճակի հետ կապված դժվարությունների** մասին, ինչը ոչ միշտ կամ ոչ ամբողջովին է ներառվել հաշվետվություններում, առավել ևս՝ SWOT-ում:
   - Ուսանողները նշել են նորագույն գրականության պակասի, հայալեզու մասնագիտական գրականության բացակայության, ուսումնական օժանդակ նյութերի դժվարհասանելիության, գրադարանի սպասարկումից դժգոհության մասին:
   - Ուսանողների գերակշիռ մասը բավարարված չէ լսարաններից և դրանց կահավորման և տեխնիկական հագեցվածությունից: Երբեմն միևնույն դասաժամին տարբեր խմբեր/կուրսեր են ուղղորդվում միևնույն լասարան, շատ հաճախ ուսանողների քիչ թվի պատճառով ստիպված են լինում տեղավորվել ամբիոնում:
8. Ուսանողների զգալի մասն էլ մատնանշում է **ԵՊՀ անվտանգության հարցերը**, երբ շենք են ազատ մուտք գործում համալսարանի հետ կապ չունեցող անձինք, լինում են նաև գողություններ: Ուսանողները նաև նշում են, թե ինչպես են դասերը ընդհատվում, խանգարվում է դասապրոցեսը նշված կողմնակի անձանց՝ լսարանի դռները բացուխուփ անելու հետևանքով: Համեմատության համար նշվում են այլ բուհեր, որտեղ անվտանգության հարցերը իրականացվում են բարձր մակարդակով:
9. Որոշ ուսանողներ համարում են, որ **սովորելով ԵՊՀ կենտրոնական կամպուսից հեռու կտրված են համալսարանական կյանքից**, չեն մասնակցում ուսանողական կամ գիտակրթական միջոցառումների:
10. Ուսանողները դժգոհություն են հայտնում **ուսման բարձր վարձերի և ցածր կրթաթոշակների առկայությունից**:
11. Ֆոկուսխմբային հարցումների ժամանակ ուսանողները նշել են, որ դիմորդը նախապես ԵՊՀ կայքից ոչ միշտ է ստանում ճշգրիտ և **թարմ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ:**
12. Նրանք նաև կարծիք են հայտնել, որ կարևոր է **բարձրացնել ընդունելության շեմը** և դուրս թողնել ոչ արդյունավետ՝ միայն դիպլոմի համար սովորողներին:

13. Ըստ ուսանողների կարծիքի՝ անհրաժեշտ է խիստ վերաբերվել համալսարանին կից գործող **կուրսային և ավարտական աշխատանքներ** վաճառող կառույցներին, փակել դրանք:
14. Միաժամանակ, տարբեր առումներով նշելով դիտարկված ԿԾ-ների որոշակի բացթողումների և թույլ կողմերի մասին, **ուսանողները ընդհանուր առմամբ իրենց գոհունակությունն են արտահայտել ընտրած ծրագրերի վերաբերյալ**:

<u>ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ մոնիթորինգի գործընթացի իրականացման վերաբերյալ</u>

1. Մագիստրոսական կրթական ծրագրի մոնիթորինգի հաշվետվության համար սահմանված ձևաթերթի որոշ կետեր առանձին ԿԾ-ների դեպքում ճշգրտորեն չեն լրացվել կամ մասնակիորեն են լրացվել: Դրանցից են՝
   - **Կրթական ծրագրի վերաբերյալ ընդհանուր տվյալների հատվածը,** որտեղ **ծրագրի սկզբնական հաստատման տարեթիվը** որոշ ԿԾ-ների հաշվետվություններում նշված չէ:
   - **Ծրագրի քանակական բնութագիրը (ձևաթերթի 2-րդ կետ),** որտեղ **Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ** հատվածում, ի թիվս այլ տվյալների, պետք է ներկայացվեր նաև մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը: Որոշ ԿԾ-ների հաշվետվություններում այդ տվյալները բացակայում են:
   - **Ուսանողական հարցումների արդյունքները (ձևաթերթի 3-րդ կետ)**, որտեղ պետք է ներկայացվեն ուսանողական հարցումների արդյունքները՝ դասընթացի մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև ***<u>նախորդ երկու տարիների</u>*** ընթացքում ուսանողների կողմից բարձրացված հարցերն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված միջոցառումները: Փոխարենը, շատ ԿԾ-երի հաշվետվությունների տվյալ հատվածում պարզապես ներկայացված են ֆոկուսխմբային հարցումների արդյունքները:
   - **Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները (ձևաթերթի 4-րդ կետ),** որտեղ պետք է ներկայացվեն ծրագրի ***<u>նախորդ երկու տարիների</u>*** շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները: Փոխարենը, շատ ԿԾ-ների հաշվետվությունների տվյալ հատվածում դարձյալ ներկայացվել են ՖԽՀ արդյունքները:
   - **Ծրագրի շահակիցների արձագանքը (ձևաթերթի 5-րդ կետ),** որտեղ պետք է արտացոլվեն տվյալ ուստարում կազմակերպված ***<u>մոնիթորինգի ֆոկուսխմբային հարցումների</u>*** արդյունքներն **<u>ամբողջովին</u>**: Վերջիններս շատ ԿԾ-ների հաշվետվությունների տվյալ հատվածում թերի են ներկայացված:

- Որոշ դեպքերում ԿԾ-ի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունում արտացոլված չեն ֆոկուսխմբային հարցումների արդյունքները՝ պատճառաբանությամբ, որ ֆոկուսխմբային հարցման վերլուծությունը «չի համապատասխանում ֆոկուսխմբային հարցման պահանջներին», «սխալներով է ներկայացված ուսանողների կողմից բարձրացված հարցերը» և այլն:
- Որոշ ԿԾ-ների հաշվետվություններում էլ թեև նշված է, որ անցկացված ֆոկուսխմբային հետազոտության արդյունքները գրեթե ամբողջությամբ հաշվի են առնվել հաշվետվությունը կազմելիս, սակայն հաշվետվությունները ստուգելիս պարզվել է, որ նշվածը այնքան էլ չի համապատասխանում իրականությանը:
- **Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը (ձևաթերթի 9-րդ կետ**), որտեղ ներկայացվում է SWOT աղյուսակը: Յուրաքանչյուր SWOT գործոնի համար պետք է ներկայացվեն որոշակի տվյալներ: Մի շարք ԿԾ-ների հաշվետվությունների տվյալ հատվածի, մասնավորապես **Թույլ կողմեր** և **Վտանգներ** բաժիններում ներառվել է միայն մեկական կետ:
- Որոշ ԿԾ-ների SWOT-ներում երբեմն ներկայացված թույլ կողմերը և վտանգները գրեթե նույնաբովանդակ են: ԿԾ-ների թույլ կողմերը ներկայացնելիս երբեմն հաշվի չեն առնվել ֆոկուսխմբային հարցումների արդյունքները:
- **Որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը (ձևաթերթի 10-րդ կետ**), որը պետք է բխի SWOT աղյուսակում նշված վտանգներից և թույլ կողմերից, որոնք իրենց հերթին պետք է ամբողջովին համահունչ լինեն տվյալ ուստարում իրականացված ՖԽՀ-ին, նախորդ 2 ուստարիներին իրականացված ուսանողական և շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարվածության վերաբերյալ հարցումների արդյունքներին: Տվյալ կետը որոշ հաշվետվություններում ներկայացված է թերի և շատ դեպքերում չի բխում SWOT-ից: ԿԾ-ների որակի բարելավման միջոցառումների պլանները որոշ դեպքերում չեն բխում նաև ուսանողների առաջարկությունների և ծրագրերի բովանդակության վերաբերյալ կարծիքներից:

2. ՖԽՀ արդյունքներում արձանագրված՝ ուսանողների հայտնած որոշ կարծիքներ և նկատառումներ ամբողջովին չեն ընդգրկվել մոնիթորինգի հաշվետվության մեջ, մասնավորապես՝
   - ԿԾ-ում ներառված առարկաների վերաբերյալ առաջարկները (ինչպես, օրինակ, կրկնությունները՝ կապված բակալավրական ծրագրերի հետ),
   - դասաժամերի կազմակերպման վերաբերյալ առաջարկները (աշխատող ուսանողների համար դասացուցակի հետ կապված դժվարությունները),
   - քննությունների անցկացման վերաբերյալ առաջարկները (առավել օբյեկտիվ գնահատման հետ կապված առկա էին դժգոհություններ),

- Մագիստրոսական թեզերի պատրաստումը կազմակերպելու ճկունության վերաբերյալ առաջարկները (թեզերի պատրաստման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում, թեզերի թեմաների և ղեկավարների ընտրության հետ կապված դժվարություններ որոշ կրթական ստորաբաժանումներում),
- դասապրոցեսի առավել ինտերակտիվ կազմակերպման վերաբերյալ կարծիքները և պահանջները (առաջարկներ՝ դասերը քննարկումների և այլ ինտերակտիվ դասավանդման մեթոդների կիրառմամբ անցկացնելու վերաբերյալ),
- ԿԾ-ում նոր և առավել արդի առարկաների ներառման մասին դիտարկումները,
- դասախոսների մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության արդիականացման մակարդակի մասին ուսանողների կարծիքները:

3. Ոչ պակաս կարևորություն ունեն նաև ընդհանուր ԵՊՀ-ի և դիտարկվող կրթական ստորաբաժանման վերաբերյալ ուսանողների կողմից տրվող գնահատականները և կարծիքները, որոնք նույնպես ամբողջովին ներառված չեն մի շարք ԿԾ-ների մոնիթորինգի հաշվետվություններում, մասնավորապես՝
   - լսարանային պայմանների հետ կապված խնդիրները (լսարանների ջեռուցման, կահավորանքի և վերանորոգման և այլ խնդիրներ),
   - ՏՀՏ հագեցվածության թերի մակարդակի վերաբերյալ կարծիքները/նկատառումները,
   - գրադարանի կողմից մատուցվող ծառայությունների թերի մակարդակի մասին կարծիքները,
   - ԵՊՀ մշակութային կյանքում ուսանողների ներգրավման մակարդակի մասին ուսանողների բարձրաձայնած նկատառումները (շատ ուսանողներ բողոքում են Ուսանողական խորհրդի կողմից տեղեկատվության տրամադրման ոչ գոհացուցիչ մակարդակից):

   Վերոնշյալ կետերը պետք է հաշվառվեին և արտացոլվեին մոնիթորինգի հաշվետվության զեկույցներում:

4. ԿԾ-ի մոնիթորինգի հաշվետվության «Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ» հատվածում թերևս կարիք կար ներկայացնելու իրականացված մոնիթորինգի արդյունքների և կայացրած որոշումների վերաբերյալ համապարփակ եզրակացություններ, որոնք պետք է ամբողջովին բխեին հաշվետվության մեջ ներառված **բոլոր** կետերից: